ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

Փաստաբանի մասնագիտության խթանումը եվրոպական չափանիշներին համապատասխան



Իրականացման ժամանակահատված: 01.07.2019 - 28.02.2023

ԱլԳ երկրներ:

ԵՄ ներդրում: € 500 000

Ընդհանուր բյուջե: € 625 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

Council of Europe

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ: facebook.com/partnershipgovernance, https://twitter.com/CoeEapPCF,

Նախագծի կայքէջ: partnership-governance2-eu.coe.int

Նախագծի նկարագրություն:

«Փաստաբանի մասնագիտության խթանումը եվրոպական չափանիշներին համապատասխան» ծրագիրն աջակցում է մասնակից երկրների փաստաբանների ասոցիացիաների և իրավաբանական ընկերությունների, այդ թվում՝ կին իրավաբանների և երիտասարդ իրավաբանների ասոցիացիաների միջև համագործակցության ամրապնդմանը՝ նպատակ ունենալով բարելավել փաստաբանական համայնքի ներքին գործառնությունը և անկախությունը:

Ակնկալվող արդյունքներ:

- Ստեղծվել է երկրների իրավաբանների և փաստաբանների ասոցիացիաների տարածաշրջանային համագործակցության ցանց՝ ամրապնդելու մասնակից երկրների փաստաբանների ասոցիացիաների և իրավաբանական ընկերությունների շրջանում փոխգործակցությունը՝ նպատակ ունենալով նպաստել արդարադատության պատշաճ իրականացմանը՝ ի շահ մասնակից երկրների քաղաքացիների:
- Բարելավվել է փաստաբանների միությունների ներքին գործառնությունը:
- Ամրապնդվել է փաստաբանների անկախությունն ու արհեստավարժությունը:
- Ամրապնդվել է փաստաբանների կողմից իրավաբանական ծառայությունների մատուցման որակը: